ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԺԱՄԱՆԵՑ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

1989 թվականի նոյեմբերի 20-ին Ստեփանակերտ ժամանեցին Լեռնային Ղարաբաղի՝ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի հանձնարարությամբ ստեղծված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի անդամները. ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի միությունների խորհրդի նախագահի տեղակալ, Մոլդավական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Մոկանուն, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահի տեղակալ, Ուկրաինական ԽՍՀ գրողների միության վարչության քարտուղար Բորիս Իլյիչ Օլեյնիկը, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսեյ Միխայլովիչ Եմելյանովը, պատերազմի և աշխատանքի վետերանների Մոսկվայի քաղաքային խորհրդի նախագահ Նիկոլայ Յակովլևիչ Սելյոն, ԽՄԿԿ Չեչեն-Ինգուշական մարզկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Կոնստանտինովիչ Ֆոտեևը և Էստոնական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող Կլարա Սեմյոնովնա Խալլիկը:

Ստեփանակերտի օդանավակայանում հանձնաժողովի անդամներին դիմավորեցին ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի նախագահ, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Արկադի Իվանովիչ Վոլսկին, կոմիտեի անդամներ Վիկտոր Մաքսիմովիչ Միշինը, Վիկտոր Վասիլևիչ Պիտովը, պաշտոնական այլ անձինք:

Հանձնաժողովը, ինչպես նշված է ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի որոշման մեջ, քննության կառնի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրավիճակը և արդյունքների մասին կզեկուցի ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Ղարաբաղյան պրոբլեմի ուսումնասիրման ընթացքում հանձնաժողովի անդամները հանդիպումներ կունենան աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչների հետ:

Մեր թղթակիցը հենց օդանավակայանում դիմեց ընկերներ Օլեյնիկին և Խալլիկին:

— Մենք,— ասաց Բորիս Օլեյնիկը,— պետք է գտնենք ղարաբաղյան սուր պրոբլեմի լուծման օպտիմալ տարբերակ: Կանենք ամեն ինչ, որպեսզի չանտեսվեն ոչ մեկի շահերը:

— Իմ կարծիքով,— ասաց Կլարա Խալլիկը,— հանձնաժողովը մտադիր չէ այստեղ կայացնելու վերջնական վճիռ: Մենք պետք է հանգիստ մթնոլորտում լսենք ժողովրդին: Որոշումը հավանաբար կընդունվի համատեղ: Ես ծանոթ եմ ղարաբաղյան պրոբլեմին: Այդ պրոբլեմը պետք է լուծվի, և դա ամենագլխավորն է: Բացի այդ, մենք պետք է գնահատենք այն ամենը, ինչ տեղի է ունեցել և տեղի է ունենում այստեղ: Ամենաբարձր չափանիշը դա մարդկային կյանքի արժեքն է: Այս չափանիշով էլ հարկավոր է գնահատել ամեն ինչ:

● Կարծիքների առաջին փոխանակություն:

Լուսանկարներ՝ Ալ. ՍԱՐԳՍՅԱՆԻ